Զ. — պարտէզ, մէզ, մողէզ, դէզ, սէզ, արեւակէզ, պնակալէզ, կոճղէզ, ասպարէզ, բզէզ:

Բեհէզ, գէզ կը գրուին թէ՛ ե-ով եւ թէ է-ով. կանոնաւոր է գրել է-ով:

Բացառութիւն են քեզ, ձեզ, մեզ խումբը (որոնք այսպէս կը գրուին մեք, մեր, մեօք, եւ այլն, ձեւերուն նմանողութեամբ), հեզ, դե-նիմազդեզն:

Մէզ եւ մեզ բառերուն մէջ նշանակութեան տարբերութիւն մը կայ:

Ժ. — վրէժ, մժէժ, խէժ, գաճավէժ, շրէժ, բէժ՝ վարագոյր:

Յաւէժ՝ որ կը ծագի յաւերժ բառէն՝ ր-ի անկումով, կանոնաւոր է. անկանոն յաւեժ՝ գրչութիւնը՝ որ սովորական եւս չէ, ծագած է յաւերժ բառէն՝ նմանողութեամբ:

Բացառութիւն չկայ:

Ճ. — վէճ, գէճ, բէճ:

Բացառութիւն չկայ:

Ն. — շէն, քէն, հէն, կոճկէն, ապառազէն, անդէն, պատձէն:

Խումբ մը բառեր՝ որ ստուգաբանօրէն ե-ով պիտի գրուէին, է-ով կը գրուին՝ Ն-ի քով լինելուն համար. աշտեայ, աշտէ, աշտէն. տուընջեան, տուընջենային, տուընջէն. պատձեան, պատձէն. բաղեան, բաղէն. բորեան, բորէ, բորէն: Ասոնց համեմատ՝

Գեհեան, ցորեան, իշրեան, ատեան, բլիրեան, վզեան կորսնցնելով իրենց վերջընթեր ա տառը՝ պիտի գրուէին գեհէն, ցորէն, իրէն, ատէն, բլիրէն, վզէն՝ ուղիղ կանոնին համաձայն. բայց կը գրուին գեհեն, ցորեն, իրեն, ատեն, բլիրեն, վզեն՝ հակառակ կանոնին:

Ամենայն համառօտուելով եղած է ամէն՝ որ հին ձեւով կը նշանակէ նաեւ եղիցի. բայց զանազանութեան համար եղիցի նշանակութեան կարելի է յատկացնել ամեն ձեւը:

Հեղղէն կը գրուի նաեւ հեղղեն. կանոնաւոր է գրել է-ով:

Զեն՝ զոհ, մատաղ կը գրուի ե-ով՝ զանազանելու համար զէն (զէնք) բառէն:

Իսկ բ, կ, մ, գիրերուն անուններն կը գրուին թէ բեն (որմէ այբուբեն), կեն, մեն եւ թէ բէն, կէն, մէն: Այս վերջին ձեւերն աւելի կանոնաւոր են:

Բացառութիւն են դեն, համադեն, աղեն, ձեն՝ օտար եւ այժմ անգործածական բառեր:

Նաեւ բայերուն յոգ. գ. դէմքը. առնեն, ասեն, սիրեն, կը բերեն:

Անորոշ է պատշեն կամ պատշէն՝ լոյս, ճառագայթ:

Շ. — շրէշ, խենէշ, ուղէշ, պատնէշ, գէշ, հրէշ:

Ուղէշ, խենէշ կը գրուին նաեւ ե-ով. կանոնաւոր է գրել է-ով:

Խարտեաշ համառօտուելով կ'ըլլայ խարտեշ եւ ուղիղ կանոնին համեմատ խարտէշ. Ա—Յ. Ե—. կը նշանակէ թէ՛ մին եւ թէ միւսը, լաւագոյն է վերջին ձեւը:

Բացառութիւն չկայ:

Չ եւ Ջ քիչ գործածական են. առաջինէն կան՝ մէջ, առէջ կամ առէջ, եղեւէջ, գէջ, բէջ՝ կճնակ: Իսկ երկրորդէն կան՝ խէչ՝ խաղողի ճզմած կեղեւները եւ խէչ կամ խէչ՝ նեցուկ, հագուստի գրպան, խեչափառ:

Ջ կանոնաւոր է եւ առանց բացառութեան:

Չ-ի համար թէեւ օրինակները բաւական չեն, սակայն նմանողութեան օրէնքով կարելի է ընդունիլ թէ այս ալ է կը պահանջէ. որով եւ զանազանութեան համար կարելի է երկու օրինակներէն առաջինը պահել՝ ինչպէս որ է, եւ երկրորդը գրել միայն խէչ ձեւով:

Բացառութիւն է չեչ՝ մանրուք, մնացորդ, դիրտ, — ծակ, ցան (երեսի) քարի, մեղրի բջիջ, խաղողի կեղեւ, եւ այլն:

Ս. — վէս, գէս, ասպարէս, այսպէս, այնպէս, կրկէս, հանդէս, մեցամէս:

Գիտելի են — մեցամէս որ ստուգաբանօրէն պիտի գրուէր մեցամեց (իբրեւ կրկնութիւն մեց բառին) = մեցամես. նմանապէս եւեւս՝ երէց (ե-ով), բայց եռիէս՝ է-ով:

Բացառութիւն են երես, տես (եւ ասկէ բարդուածները՝ տնտես, գաղտատես, եւ այլն): Նոյնպէս յունարէնէ փոխառեալ անգործածական պոռպես = պոռպեսմիոս՝ առաջադրութիւն:

Նաեւ բայերուն եզ. բ. դէմքը. ուտես, առնես, ասես, կը սիրես, սիրեցես:

3°. Երբեմն է եւ երբեմն ե կ'առնեն ծ, ց, պ, տ գիրերը: